

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թիֆլիսի տնտրական գազեր:

Հրատարակում է շաբաթը մէկ ան-
ժ կէս թերթ, կիրակի օրերով: 10
օրաց զինք Մարտից մինչև Յունիս-
քաղաքում: 2 ման. 50 կոպ., դուրսը՝
անկթ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ
(Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՏԱՐԻ)

Գազերին անորագրվող կարելի է խմա-
ղրողի մօտ:
Գազերի մասին հրատարակվելու կընդունվին
մասնաւոր յայտարարութիւններ: Գնեթի
մասին կարելի է խմանալ խմբագրատանը:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ:

Յերթիւնի կարգադրութիւններ: Տրդեր և ու-
յայտարարութիւններ: Էլի քանիքի մասին:
վաճառականների և վաճառականութեան մա-
մէկ քանի խոսք: Արդարան և վարանու-
մը: Զանազան տեղեկութիւններ: Առեւտրական
գիտութիւններ:

ԽՄԲԱԳՐԱՏԱՆԻՅ:

«Վաճառականի» խմբագրու-
ունը յայտնում է, որ էս տարի
սկիզբի 1-ից սկսած, բացի 10
մնով ստորագրվողը, ընդունում
նմանապէս և 6 ամսով ստո-
ագրութիւն մինչև դեկտեմբերի
երջը: Էդ վեց ամսի համար գի-
ը նշանակվում է Թիֆլիսում՝
մ. 50 կ. խաղաղաքից դուրսը՝
2 մ.

Դեռ էլի շարունակվում է
«Վաճառականի» համար ստո-
ագրութիւնը առաջին ԱՅ-ից էս
գազերի ճակատումը յայտնած
չներով:

ՏԵՐԱԿՈՒՆԻ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՏՈՐԳԵՐ ԵՒ ՈՒՐԻՇ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Վրաստանի և իմէրէթի հայոց վիճակա-
նի կոնստատրիայումն էս տարի սեպտեմ-
բերի 19-ին նշանակված է Թիֆլիսումը, Օր-
Մաճալայի մօտ, կուր դուռ ամիս դանված,
յտեխաննու Գուլիփաշեանցի. Սուրբ Էջմի-
ածնին և Թիֆլիսի Ներսիսեան հոգևոր դըպ-

րոցին ընծայած այդու իջարով տալու տոր-
դը: Ուր կամենում է մանրամասը տեղե-
կութիւններ ստանալ էս տորդի մասին, կա-
րող է դառնալ յիշեալ կոնստատրիան ամեն
օր առաւօտեան 8 սահաթից մինչև կէսօրը,
բացի կիրակի և հանդիսաւոր օրերից:

Թագաւորական կայքերի դեպարտամեն-
տումը սեպտեմբերի 15-ին նշանակված է
Սքնախի նահանգի Կարդանախի գիւղումը
դոնված եկեղեցական այդու 1867 թւի յուն-
վարի 1-ից իջարով տալու տորդը:

Մի և նոյն տեղումը և մի և նոյն ժամա-
նակը նշանակված է Թիֆլիսի նահանգի Խա-
շթմ գիւղումը դոնված եկեղեցական այդու
1867 թւի յունվարի 1-ից իջարով տալու
տորդը:

Բաքուի գաւառական կառավարութեան-
մը սեպտեմբերի 1-ին նշանակված է Բաքուի
դանձարանից նոր սե փողի միւս դանձա-
րաններ տանելու տորդը: Էդ սե փողի մէկ
փութը 32 մանէթ է: Բաքուի նահանգական
դանձարանից պէտք է տանվի էդ սե փողից
Թիֆլիսի նահանգական դանձարանը՝ 40,000
մանէթի, Նուխու նահանգական դանձարա-
նը՝ 7,000 մանէթի, Գուրայի նահանգական
դանձարանը՝ 3,000 մանէթի և Գիւրլենդի
նահանգական դանձարանը՝ 10,000 մանէթի:

Թիֆլիսի քաղաքական կառավարութե-
անն էս օգոստոսի 16-ին նշանակված է
1866 թւի սեպտեմբերի 1-ից մինչև 1869
թւի սեպտեմբերի մէկը Թիֆլիսումը ծախու
մարդկու ապրանքից հարկի ժողովելու իջա-
րով տալու տորդը:

Քուլթայի գաւառական կառավարութե-
անմը սեպտեմբերի 24-ին նշանակված է
Քուլթայիսումը 150 մարդու համար բերդ չի-
նելու տորդը իր պատկանելիքներով: Էդ գոր-
ծի համար նշանակված է 60,804 մ. 40 կոպ:

Փոշուի կայքերի կառավարութեանի գլխա-
ւոր կոնստրայումը օգոստոսի 31-ին նշա-

նակված է Վոննու Գրուգինսկի ճանապար-
հի վրայ 1867 թւի համար դարման և ա-
լիւր պատրաստելու տորդը 13 ստանցիա-
ների համար:

Կովկասեան պրիկազումը օգոստոսի 22-ին
և հետեւալ օրերը կծախվին ոսկէղէն, ար-
ծաթէղէն և ուրիշ թանկագին բաներ, որոնց
թափելու ժամանակը անց է կացրած:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Օգոստոսի 13-1866.

Անցեալ անգամի յօդուածումն ասացինք,
որ փողի հարկատրութեան շատ լինելուցը և
ոսկու և արծաթի պակասութենիցը ծագեց
էճախբարը և սոփալեց վաճառականներին դա-
նազան հնարքներ փնտրել պակասորդ ոսկու
ու արծաթի տեղ մէկ ուրիշ բան գործ դը-
նելու: Տամսերկուրորդ դարից մինչև
տամսուխութեանը դարը էդ նպատակին
հասցնում էին մասնաւորապէս բանկերը և
մէկ մասով էլ վեկսիւնները, որոնք որ շատ
անգամ իսկապէս փողի տեղ էին բռնում:
Բայց էլի վեկսիւնները և ուրիշ մասնաւոր
թղթերը միմիայն գործ էին դնում վաճա-
ռականների մէջ և էն էլ շատ սակաւ: Միւս
կողմից առուտուրը ծաղկում էր, փողի պա-
կասութիւնը աւելանում էր և այն—էս ըո-
րը հարկադրում էր տալ մասնաւոր վեկ-
սիւնին էն նշանակութիւնը, որ ունի ոսկէ ու
արծաթէ փողը և էդպիսով ոսկուն ու ար-
ծաթին չտալ էն հարկը, որին ասում են խուր-
դայ անելու (փոխելու) փող:

XVII դարի վերջերին բանկերը մեծ վը-
նաս տվին փողի առուտորին: Էդ բանկե-
րը ոչ թէ միայն հանեցին գործածութենից
ոսկին ու արծաթը՝ տեղը թուղթ գործ դը-
նելով, այլ և մասնաւոր վեկսիւն չինեցին ա-
ռուտորի և էճախբարի միջոց, գործիք: Էդ
ժամանակներից վեկսիւնը անանում է մէկ հա-

տարակալան իրաւունքը և ոսկու տեղ է բլու-
նում:

Էդ բանկերը դուրս են տալիս անանուն
կամ ներկայացնողի վրայ տոմսակներ, այս
ինքն թէ թղթէ փող են կտրում: Նրբ որ
բանկը մասնաւոր, ժամանակաւոր տոմսակի
տեղ դուրս է տալիս իր տոմսակները, էդ
կնշանակէ, թէ բանկը կտրում է թղթէ փող
էնպէս, ինչպէս և տէրութիւնը: Թէ մէկը և
թէ միւսը, թղթէ փող է, թէ ոսկէ—կրկուն
էլ անժամանակ, անանուն վեկսիւններ են, որ
ամենքի անունով դուրս են տված: Ոսկէ
փող կտրել—կնշանակէ մէկ որոշած ձև և
պատկեր տալ ոսկու կտորներին, որոշել քա-
շը և պորբը: Թղթէ փող կտրել կնշանակէ
մասնաւոր վեկսիւնի տալ աւելի կատարեալ
ձև, կնշանակէ վկայել ու նրաշխատութեամբ
նալ, որ դա միշտ կարող է փոխվել ոսկու
և արծաթի վրայ մէկ խօսքով ապահովաց-
նել:

Առաջին եղպիսի բանկը հիմնվեցաւ Լոն-
դոնում 1694 թւին Վիլհամ Պետերսոնի
ձեռով, երկրորդը միւս տարի Էդինբուրգի
մէջ, յետոյ 1718 թւին Պարիսումը բաց ա-
րաւ Պետերսոնի աշակերտ երեւելի Ջոն-Լոն
և 1790 թւին բացվեցան Ամերիկայի հիւսի-
սային միացեալ նահանգներումը: Բայց դեռ
էդ բանկերը նոր էին բացվել, որ առեւտրա-
կան աշխարհում ամեն տարի միմեանց վը-
րաց սկսեցին կրկնվել կրկնվանք ու կոտ-
րութիւններ և 1814 թւից դէսը շատ սովո-
րական բան դարձան: Հետեւանքն էն էլաւ,
որ էդ տեսակ բանկերիցն օգուտի տեղ վը-
նաս կրեց վաճառականութիւնը:

Ներկայացութիւնն էն է, որ բանկերն էլ
հնացած միջոցներ են առուտուրի համար և
հիմի պէտք է չէ թէ շատացնել բանկերի
թիւը, այլ աշխատել դրանց գործունէութենի
ձևը փոխել: Թէ ինչի, կաշխատենք միւս
անգամ պարզելու:

Ա. Ե.

ՄԵՐ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ՎԱՃԱՌԱ-
ԿԱՆՈՒԹԵՆԻ ՄԱՍԻՆ ՄԷԿ ՔԱՆԻ ԽՕՍԻ:

Թէ արհեստականութիւնը և վաճառակա-
նութիւնը որ և իցէ երկրին կեանք տվող զօ-
րութիւնն է, որ առողջ մարմնի երակների
պէս, տարածում է կեանքը և բարօրութիւն
թաղադրութիւնների ամեն կողմերումը և
սահմաններումը—հիմի կատկածող քիչ կայ
մեղմումն առ հասարակ: Ի հարկէ էնպէս
ընդհանրացած չէ էստեղ էդ միտքը, ինչպէս
միւս երկրներումը, որտեղ հասարակութիւն-
նեղին կեանքը և շունչ տվողներն են և տվել

են արդէն վաճառականները և արհեստա-
գէտները:

Որ և իցէ աշխարհի բոլոր բնական բերքերը
փողովում են դրանք իրանց ֆարքիկաներումը
և զաւթներումը և յետոյ արդէն մշակած և
ազնւացրած ապրանքները ծախում են կամ
իրանց հայրենիքումը, կամ սահմանիցը դուրս:
Մէկ խօսքով դրանց ձեռին է երկրի բոլոր
հարստութիւնները և նրանից մեծ մեծ օ-
գուտ քաղելու միջոցները:

Ինչիցն է, որ ուրիշ երկրներումը թէ ար-
հեստները և թէ վաճառականութիւնը օրէցօր
զօրանում, կատարելագործվում և աւելի և
աւելի պատիւ է ստանում: Ենդուրից, որ էն
տեղերումն արդէն ճանաչել են վաճառա-
կանութիւնի և արհեստագիտութիւնի տված
օգուտները, իմացել են որ աւելի երկար և
անդադար պարապելով էդ բաներով աւելի և
աւելի ոյեալ է շատանան նրանց հարստու-
թիւնների միջոցները: Հէրը սկսում է որ և
իցէ առուտուր կամ արհեստ, աշխատում է
դ շահւում է: Ի հարկէ գործի սկսողն էնքան
չի կարող շահվել, որքան նրա շարունակողը,
տասը տարի մէկ գործով պարապելն էնքան
օգուտ չի կարող բերել մարդուն, որքան եր-
կար և շարունակ մի և նոյն գործով պարա-
պելը: Էդուր համար էլ հէրն իր որդուն, էն-
պիսի ուսումն է տալ—տալիս, որ կարող է
օգուտ բերել իր գործին: Գալիս է որդին,
բռնում է իր հօր տեղը: Ես մի և նոյն ժա-
մանակը իմանում է և հօր գիտեցածը և ու-
սումնարաններումը սովորածը: Էդ սովորա-
ծով շարունակում է դա իր գործը, փորձե-
րը փորձերի յետեից, աշխատանքը աշխա-
տանքի վրայ և եղպիսով զիշեր ցրեկ ան-
դադար աշխատելով հասնում է դա իր գոր-
ծի կատարելագործելուն: Գալիս է թոռը,
շարունակում է մի և նոյն գործը և այլն և
այլն: Ենպէս որ շատ երկիրներումը 100 և
մէկ քանի 100 տարիներով մի և նոյն մար-
դու սերունդը շարունակում է մի և նոյն
գործը:

Պարզ բան է, որ էդ ձևը շատ օգտակար
և շահաւէտն է մեր ժամանակներումը: Օգու-
տը յայտնի է: Մի և նոյն գործով որ մէկ
քանի հարիւր տարիներ պարապելն մի և նոյն
մարդու սերունդները, ի հարկէ աւելի կկա-
տարելագործվի գործը, քան թէ եթէ նը-
րանք զանազան գործերով պարապելն: Ես
ուրիշ գործով պարապիմ, որդիս ուրիշ գոր-
ծով և թոռս էլ ուրիշ գործով— յայտնի բան
է, որ ամեն մէկս սկսած գործերս կիսակա-
տար կթողնեմ: Հունձը յետոյ է լինում:
Ժամանակներ է հարկաւոր, որ մէկ գործից

նշանաւոր օգուտներ ստացվին: Հարկաւոր
է համբերութիւն և դործ: Էդպէս սերունդ-
ներով պարապելը սիրել է տալիս գործը, հե-
տին ու հետը քաղցրանում է՝ աւելի և ա-
ւելի օգուտներ բերելով: Եւ ի հարկէ մէկ
մարդ աւելի բան կարող է առաջացնել, երբ
որ մէկ տեսակ գործ է շինում, քան թէ երբ
որ զանազան գործերով է պարապում: Յայտ-
նի բան է, որ ողջ կեանքս հենց մէկ տե-
սակ բանով լինիմ պարապում, օրինակ բամ-
բակեղէն կամ բրդեղէն շինելով և կամ
բամբակեղէն կամ բրդեղէն ծախելով և էն
էլ բամբակեղէն և բրդեղէն միայն մէկ տե-
սակը շինելով կամ ծախելով, աւելի միջոյ
ունիմ գործս լաւ մանրամասը քննելու, աղ-
նւայնելու, զփառութիւնները հետապնե-
լու, պակասութիւնները ուղղելու և կղպտով
աւելի մեծ մեծ օգուտներ ստանալու:

Էդպէս շարունակ գործ տեսնելով, գործն
էլ և գործով պարապողներն էլ պատիւ են
ստանում, օրէցօր աւելանում է նրա յարգը
և հետեւաբար դէպի գործով պարապողները:
Որովհետեւ գործն է պատիւ տալիս մարդուն:
Եւ էդ հիման վրայ մէկ կերպով պատւում
են էն երկիրներումը և աշխատասէր արհես-
տաւորը, և գործունէաց վաճառականը, և
արժանաւոր աստիճանաւորը: Ամեն գոր-
ծի մէջ յարգվում է օրինաւոր և բարեկը-
պատակ գործունէութիւնը և ոչ թէ պաշտ-
վում է մէկ գործը, խի միւսը անարգվում
է, իրրե ցած և ստորին կարգ մարդկանց
պարապումը:

Գործը մարդուց պատւովում և մարդն էլ
իր կողմից իր ձեռիցն եկածը գործիցը չպա-
կասեցնելով, էդպէս փոփոխակի միմեանց
օգնելով, ծաղկում է որ և իցէ երկրիւր ար-
հեստներով, վաճառականութիւնով և ուրեմն
հարստութիւնով: Աղնւանում են բնութենի
բերքերը, մշակվում են էդ բերքերը աւելի
կատարելագործված գործիքներով, լաւանում
են ճանապարհները, ապրելու միջոցները և
ուրեմն հաստատվում է երկրի բարօրութիւնը:

Էդ ձևով շատ տեղ շատ թաղաւորութիւն
հասել է բարօրութեան և վայելում է նրա
պատուներին:

Ռուսաստանումն էլ նմանապէս օրէցօր
հասկացվում է էդ միջոցը և աւելի և աւելի
հաստատվում է ամեն կողմերումը բարօրու-
թիւնը: Են վաղ էր, որ 20, 30 տարով էլ
չէր շարունակվում էդտեղ որ և իցէ առե-
ւորական տան գործունէութիւնը: Էն վաղ էր,
որ արհեստները և վաճառականութիւնը չէին
պատւում, ինչպէս պէտք էր և վաճառակա-
նը իր անպատուութիւնը իր որդեկանցից

թէպէտ էդ տունը 30,000 մանէթից աւելի արժէ: Էս կուտրացածն էլի կենում է էն տանը և մինչև հիմի: Մանաւանդ ուշադրութենի արժանի է էն բանը, որ դրա տան կայքը վերգրելիս գտել են մուշկիր և եռանկիւնի դտակ, որպէս թէ յիշատակ նրա վերջին ժամանակներումը քաղաքական պաշտօնով անշահաւէր ծառայելունը: Պաիր երկու պարտաւէրների խնդրով բերդումը բռնվեցաւ, բայց շուտով էլի դուրս թողին և հիմի արդէն կատարեալ բաւականութենով երևում է ամեն հանդիսաւոր զբոսարաններումը և էդորով երկի կամենում է դա հաստատել, որ աշխարհումը շատ բան կախած է ճարտարութենից և հնարագիտութենից: Էդ կուտրութիւնը զանազան խօսակցութիւնների պատճառ դառաւ քաղաքումը: Հասարակութիւնը գրգռված է էդ պատճառով էնպէս, որ պարտաւէրներից մէկն իր մէկ քանի հազար մանէթի պարտաթղթերը յետ է վեր առել:

Շատ տխուր և վրդովեցնող են էս փաստերը: Կուտրացածների էդպիսի արարմունքները ցոյց են տալիս ժողովրդի մէջ էտիրարի քլուծիւնը և վաճառականութենի նեղ դրութիւնը, որի հիմը համարվում է խաբեբայութիւնը և որովհետեւ էդ չարագործութիւնը չէ պատժուում ինչպէս հարկն է, տեղիք է տալիս և մանր վաճառականներին էնպիսի մեծ և հարուստ վաճառականների օրինակին հետեւել:

Միութարական լուր Երևանից:
«Մեղու Հայաստանի» գաղեթի 30 Պէումը տպված Յակովբ Աղլիւթուսեանցի նամակից երևում է, որ Երևանի հայոց հողատիր զբաղւոյմը յուլիսի 7-ից մինչև 17-ը հարցաքննութիւն է էլել: Թէ կրօնագիտութենից և սրբազան պատմութենից և թէ հայոց լեզուից, թաւաբանութենից, պատմութենից և աշխարհագրութենից բաւական յաջող են դուրս եկել աշակերտները: Թոյլ են երեւել աշակերտները ոսերենից: Հարցաքննութենին ներկայ են գտնվել Ս. Էմիլիանից ուղարկած թաղէս վարդապետ ճիւղականը և Գրիգոր վարդապետ Մուշկեանցը, որոնք Ս. Սինօղի անդամներ են: Ուսումնարանի հիմնիլան բաւական լաւ առաջ դնալու համար գլխաւորապէս աշխատել է Յովհաննէս Ղորղանեանցը, որ էդ ուսումնարանումը անցեալ տարվանից տեսչի պաշտօն է կատարում և նրա աշխատակից պ. Մարտիրոս Ստամբօլեանցը: Շատ ուրախալի է մեզ համար, որ մեր վարդապետները այցելութիւն են անում հողատիր ուսումնարաններումը հարցաքննու-

թիւնների ժամանակը: Մանաւանդ շատ զբաղւոյմ են երևում մեզ թաղէս վարդապետի ասած խօսքերը պ. տեսչին և վարժապետներին, թէ «որդիք, մենք բարձր ուսումնարաններ և ճեմարաններ չունինք, մեր յոյսը էս հողատիր դպրոցների վրայ է, ուրեմն աշխատեցէք, որ մեր յոյսը պտակէք»:

Միայն էդ նամակից չէ երևում, թէ արդեօք քանի երիտասարդ է աւարտել էդ ուսումնարանումն իր ուսումը և թէ աւարտողներն ինչ գործի են կանգնում: Հարկաւոր էր մեր կարծիքով և էս տեղեկութիւնները հաղորդել մէկ էնպիսի նամակումը, որ յիշեալ գաղեթի ամբողջ կէսն ունի բռնած:

Նամակ Աղլիւթուսից: Արդումի աւագ քահանայ Գրիգոր Տէր Մինասեանցը «Մեղու Հայաստանի» խմբագրողի վրայ ուղղած նամակի մէջ յայտնում է Աղլիւթուսի հայերի ուրախութիւնը էս տարի ապրիլի 4-ին Ռուսաց Կայսր Ալեքսանդր 2-դի չարագործի ձեռից ազատվելու պատճառով: Նրկու անգամ նրանք իրանց առաջնորդ արքեպիսկոպոս Յարութիւնի հետ հրապարակով շնորհակալութենի աղօթքներ են վերառաքել Աստուծուն էս պատճառով: Էդ հանդէսներին ներկայ է գտնվել նմանապէս Աղլիւթուսի ուսաց դեսպան պ. Իվանովը:

Խօսիքայի մասին: Պետերբուրգումը յուլիսի 24-ին հիւանդացաւ խօսիքայով 210, մեռաւ 25: Յուլիսի 25-ին հիւանդացաւ 202, մեռաւ 11: Յուլիսի 26-ին հիւանդացաւ 310, մեռաւ 16: Յաւի սկսվելուց մինչև հիմի, այս ինքն յունիսի 14-ից մինչև յուլիսի 27-ը հիւանդացել է էդտեղ խօսիքայով 8741 և մեռել է 2379:

Մոսկովումը յուլիսի 16-ից մինչև 24-ը հիւանդացաւ խօսիքայով 47, մեռաւ 13:

Վարչալուծը յուլիսի 19-ին հիւանդացել է խօսիքայով 4, մեռել է 1:

Նիկիւումը յուլիսի 15-ին հիւանդացաւ խօսիքայով 52, մեռաւ 22: Յուլիսի 16-ին հիւանդացաւ 44, մեռաւ 25: Յուլիսի 17-ին հիւանդացաւ 48, մեռաւ 26:

Պոդոլսկի գաւառումը մինչև յուլիսի 9 հիւանդացել է խօսիքայով 357, մեռել է 68:

Վոլինի գաւառումը մինչև յուլիսի 8-ը հիւանդացել է խօսիքայով 41, մեռել է 6:

Նիկոլայեվ քաղաքումը յուլիսի 11-ից մինչև 14-ը հիւանդացել է խօսիքայով 8, մեռել է 3:

Գրոդնո քաղաքումը յուլիսի 13-ից մինչև 21-ը հիւանդացել է խօսիքայով 92, մեռել է 21:

Խերսոն քաղաքումը յունիսի 27-ից մինչև

յուլիսի 4-ը հիւանդացել է խօսիքայով 691, մեռել է 180:

Պորիժոմն էս վերջին ժամանակները մեռում էին խօսիքայով օրէնը 120—200, բայց հիմի մեռնում են օրէնը 90—100:

Ճաշ Նաղարեանցի համար:

Անցկացած յուլիսի 20-ին պ. Ստեփաննոս Նաղարեանցի յարգողները Թիֆլիսումը, Օրթաճաշա, Թամաշեանցի այգումը հանդիսաւոր ճաշ պատրաստեցին և հրաւիրեցին էտեղ պ. Նաղարեանցին: Ճաշին պ. Նաղարեանցը ճառ է ասել, որով յայտնել է Էռնեստը սէրը դէպի Թիֆլիսեցիք և իր պատրաստութիւնը նորից էլի աշխատելու հայերի համար դրականութենի ասպարիզումը:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լվելիպուլ յուլիսի 26:

Եւրոպայումը սպասած խաղաղութենի պատճառով քիչ քիչ սկսում են լաւանալ աււետրական հանգամանքները: Բամբակի և բրդի առուտուրը թէպէտ դեռ թոյլ է, բայց կարծում են էտեղ շուտով պէտք է լաւանայ:

Պետերբուրգ յուլիսի 28

Կուրսը Լճոդնի վրայ 29—29½ պէնս:

Պարիժի վրայ 306—307½ սանտիմ:
50% Լատարեյով առաջին փոխառութենի տոմսակները 110½ մանէթ:

50% Լատարեյով երկրորդ փոխառութենի տոմսակները 107½ մ:

Ռսկին 6 մ 60 կ

Թիֆլիս. օգոստոսի 13:

Օգոստոսի 10-ից ստացած դեպեշան հաղորդում է, որ իր ժամանակին Մաւկարիայի եարմարեան բաց է էլել:

Բամբակեղէնը թոյլ, բայց բրդի մաշանդան լաւ է:

Քաղաքումն բամբակի ոչ առուտուր կայ ոչ հարցնող:

Բրդի ծախսը լաւ է. գները 4 մ. + 8 մ. տեսակներին նայելով:

Շաքարը ինգլիզ . . . 9 մ 70 կ

— Ռսկին . . . 10 մ 50 կ

Արծաթը 84% 250 մ

— 72% 85 մ

Ռսկին 6 մ 80 կ